ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

Վարսեր համայնքի կարիքների համար Վարսեր համայնքի ճանապարհների վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀԳՄՎՀ ԳՀԱՇՁԲ 21/1 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

Վարսերի համայնքապետարան «06» օգոստոսի 2021թ.

ժամը 12:00

Մասնակցում էին հանձնաժողովի՝
նախագահ Ս. Հակոբյանը,
անդամներ՝ Հ. Աբրահամյանը,
Գ. Վարդանյանը,
Լ. Մխեյանը,
Ն. Պողոսյանը
քարտուղար՝ Լ. Արզումանյանը

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1. **« ՀՀԳՄՎՀ ԳՀԱՇՁԲ 21/1» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման մասին**

1.1 Տվյալներ՝ մասնակցի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառված լինելու մասին:

2021 թ. օգոստոսի 3-ի դրությամբ ՀՀԳՄՎՀ ԳՀԱՇՁԲ 21/1 գնման ընթացակարգի մասնակիցը ներառված չէր գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

1.2. Հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

2. **Գնումների** մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. <<ՀՀԳՄՎՀ ԳՀԱՇՁԲ 2/1>> ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին տեղը զբաղեցրած /ընտրված/ մասնակից ճանաչել <<Ճան – Շին>> ՍՊԸ -ին՝ որպես նվազագույն գին առաջարկած և բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակից:

2. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

3. Համաձայն <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի անգործության ժամկետ չի սահմանվում:

4. Ծանուցել <<Ճան - Շին>> ՍՊԸ-ին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը, պայմանագրի նախագիծը, պայմանագրի /կնքվելիք պայմանագրի 10 տոկոսի չափով/ և որակավորման /իր ներկայացրած գնային առաջարկի 15 տոկոսի չափով/ ապահովումներ ներկայացնելու պահանջը: Համաձայն <<Գնումների մասին օրենքի>> ՀՀ օրենքի՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի կողմից ստորագրված պայմանագիրը, պայմանագրի և որակավորման ապահովումները ներկայացնելու դեպքում <<Ճան - Շին>> ՍՊԸ -ի հետ կնքել գնման պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

5. Գնահատող հանձնաժողովի քարտուղարին՝

5.1 Գնումների մասին ՀՀ օրենսդրությանը համապատասխան՝ հրապարակել պայմանգիր կնքելու որոշման մասին հայտարարությունը:

5.2 «ՀՀԳՄՎՀ ԳՀԱՇՁԲ 21/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքների ամփոփման նիստը հրավիրել պայմանագրի կնքմանն հաջորդող 1-ին աշխատանքային օրը, ժամը 12:00-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները.

Հանձնաժողովի
նախագահ _____ Ս. Հակոբյան

անդամներ՝ _____ Հ. Աբրահամյան

_____ Գ. Վարդանյան

_____ Լ. Մխեյան

_____ Ն. Պողոսյան

քարտուղար՝ _____ Լ. Արզումանյան